

ԼԻԲԱՆԱՆ

**Հ.Բ.Ը.Մ.ի Նախագահ Պերճ Սեդրակեան – Միութեան պատմական դերը Ցեղասպանութեան հետեւանքներու վերացման գործընթացին մէջ**

Չորեքշաբթի 6 Յուլիս 2011

*Այս թղթակցութիւնը հրատարակուեցաւ Լիբանանեան «Լօրեան Լըժուր» Ֆրանսաստառ օրաթերթին մէջ: Թարգմանութիւնը կատարուած է Միութեան Լրատուական Գրասենեակին կողմէ:*

«Ես մինչեւ ծուծս Լիբանանցի եմ: Կապուած եմ հողին, ուր ծնած եւ ապրած եմ, իսկ Հայաստանը իմ ազգային ժառանգս է»: Այս բառերով կը նկարագրէ ինքզինք աշխարհի հայկական մեծագոյն կազմակերպութեան Նախագահ Պերճ Սեդրակեան: Միութեան կեդրոնը կը գտնուի Նիւ Եորք:

Մեր պատահական հանդիպումը բարեբաստիկ գուգադիպութեամբ մը տեղի ունեցաւ Երեւանեան պանդոկի մը մէջ, ուր կը գտնուէր Պերճ Սեդրակեան մասնակցելու համար Ցեղասպանութեան 100-ամեակի Նախագահական Յանձնաժողովին, ինչպէս նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձու Կազմի տարեկան ժողովին:

Ան Լիբանանը ձգած էր 1976ին: Աւարտելէ ետք Սէն ժոզէֆ համալսարանի իրաւագիտական բաժինը, Սեդրակեան տարիներով փաստաբանական ասպարէզ վարած է Լիբանանի մէջ: Միացեալ Նահանգներ կատարած իր կարճ մէկ այցելութեան ընթացքին, ան կը հանդիպի լիբանանցի բարեկամ փաստաբանի մը, որ Նիւ Եորքի մէջ կը գործէր փաստաբանական մեծ ընկերութեան մը մէջ: Ընդառաջելով անոր հրաւերին, Սեդրակեան կը միանայ այս ընկերութեան եւ, տարիներ ետք, այսօր ան երեց գործընկերներէն մին է իրաւաբանական հաստատութեան մը, որ գրասենեակներ ունի աշխարհի 26 տարբեր երկիրներու մէջ եւ ուր կը գործեն աւելի քան 900 փաստաբաններ:

Լիբանանը ձգելէն ետք, Սեդրակեան միշտ սերտ կապ պահած է, յաճախակի այցելութիւններ կատարելով եւ յարաբերութեան մէջ մնալով բարեկամներու հետ: Ան Լիբանանի մէջ ունի իր անձնական յարկաբաժինը: Միացեալ Նահանգներու մէջ, Պերճ Սեդրակեան կը միանայ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (հիմնուած 1906ին) Կեդրոնական Վարչական Ժողովին, նախ իբր փոխ-նախագահ, իսկ 2002էն ի վեր իբր նախագահ:

Այս հանգամանգով է որ Սեդրակեան կը գտնուէր Հայաստանի մայրաքաղաքը: Համաշխարհային առումով Ցեղասպանութեան նշումը ծրագրելու համար, Հայաստանի Նախագահին գլխաւորութեամբ գումարուած Ցեղասպանութեան Հարիւրամեակի Յանձնաժողովին կը մասնակցէին պետական բարձրաստիճան պաշտօնատարներ, եկեղեցական պետեր եւ Հ.Բ.Ը.Միութիւնը:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը, որուն Հոգաբարձու Մարմնի տարեկան ժողովը կը կայանար Երեւանի մէջ, Սփիւռքահայութեան միացեալ ճիգերով տարեկան հանգանակութիւններ կը կատարէ, Հայաստանի մէջ մեծ տարողութեամբ ծրագիրներու տնտեսական կարիքները հոգալու նպատակով:

**Հ.Բ.Ը.Մ.ը եւ Սփիւռքը**

Խօսելով Հ.Բ.Ը.Միութեան մասին, որու գործունէութեան ծանօթ են լիբանանցիներէն շատեր, Պերճ Սեդրակեան կ'ըսէ: «Այս կազմակերպութիւնը հիմնուած է Գահիրէի մէջ 1906ին, Ողոս Նուպար

Փաշային կողմէ, որ գաւակն էր Եգիպտոսի այդ օրերու Վարչապետին, գլխաւոր նպատակ ունենալով պահպանել հայ ինքնութիւնը Մփիւռքի մէջ եւ ազգային ժառանգը Հայաստանի մէջ: Միութեան կեդրոնը կը գտնուի Նիւ Եորք, իսկ անոր Կեդրոնական Վարչական Ժողովին մաս կը կազմեն 21 անդամներ: Միութեան տարեկան պիւտճէն կը հասնի շուրջ 40 միլիոն ամերիկեան տոլարի: Իր հիմնադրութենէն անմիջապէս ետք, Միութիւնը դիմագրաւեց Յեղասպանութեան հետեւանքները, հասնելով հայ ժողովուրդի մարդասիրական եւ կրթական կարիքներուն: Իր աւելի քան հարիւրամեայ պատմութեան եւ գործունէութեան ընթացքին, Հ.Բ.Ը.Մ.ը ինքզինք պատշաճեցուցած է հայ ժողովուրդի կարիքներուն եւ ծաւալած է իր ծրագիրները, յատկանշական դեր կատարելով Հայաստանի եւ հայութեան ժամանակակից պատմութեան մէջ: Անմիջապէս Յեղասպանութեան յաջորդող տարիներուն Միութիւնը տնտեսապէս հոգաց եւ կազմակերպեց գաղթակայաններ Լիբանան, Սուրիա, Յունաստան եւ այլ շրջաններ: 1930ի եւ 1950ի տասնամեակներուն Միութիւնը կազմակերպեց դարմանատուններ, դպրոցներ եւ երիտասարդական ճամբարներ: 1960-ական թուականներուն, Մփիւռքի գլխաւոր համայնքներէն ներս կառուցեց ընկերային եւ երիտասարդական կեդրոններ: Հայաստանի անկախութեան եւ խորհրդային կարգերու անկումով Արեւելեան Եւրոպայի երկիրներու մէջ ստեղծուած ազատ կարգերու իրադրութեան դիմաց, Միութիւնը իր ուշադրութիւնը կեդրոնացուց հայրենի նախաձեռնութիւններու վրայ: Կրթական մարզէն ներս, Միութիւնը ունի եւ կը հոգայ աւելի քան 25 ամենօրեայ եւ միօրեայ դպրոցներ՝ երիտասարդական եւ մշակութային կեդրոններու առընթեր: Օրինակ, Լիբանանի մէջ, Հ.Բ.Ը.Մ.ը կը վարէ շարք մը կառոյցներ, որոնցմէ գլխաւորը՝ Անթիլիասի Տեմիրճեան Կեդրոնն է: Ան կը հովանաւորէ նախակրթարաններ եւ միջնակարգ ու երկրորդական դպրոցներ, կրթական եւ մշակութային բազմաթիւ գործունէութիւններով: Միութիւնը կը տրամադրէ բարձրագոյն ուսման կրթաթոշակներ յատկապէս կատարողական արուեստներու մարզէն ներս, սատարելով արուեստի եւ երաժշտութեան տաղանդներու յայտնաբերումին եւ մշակումին:

### **Նախաձեռնութիւններ Հայաստանի Մէջ**

Ի՞նչպիսի նախաձեռնութիւններ կատարած է Հ.Բ.Ը.Մ.ը Հայաստանի մէջ, օգնելու համար որ ան դիմագրաւէ այն քաղաքական խնդիրները որոնք, խորքին մէջ, հետեւանք են Թուրքիոյ Յեղասպանութեան ուրացումի քաղաքականութեան:

Իր հիմնադրութենէն ի վեր, կազմակերպութիւնը միշտ հետեւած է Հայաստանի զօրավիզ կանգնելու քաղաքականութեան: Օրինակի համար, 1928ին Միութիւնը բժշկական կեդրոն մը ստեղծեց Երեւանի մէջ: 1931ին, ատենի նախագահին նուիրատուութեամբ հիմնեց Նուպարաշէն ւանք, որ այժմ 11,000 բնակիչ ունի: 1946ին, ան ապահովեց նիւթական անհրաժեշտ միջոցները իրականացնելու համար հազարաւոր հայերու ներգաղթը Հայաստան: 1971ին, Միութեան Նախագահը՝ Ալեքս Մանուկեան իր անունը կրող թանգարանը նուիրեց Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին:

Ոչինչ մնայուն է քաղաքականութեան մէջ: Վարչակարգերը կը փոխուին սակայն ազգային աւանդը կը մնայ: Անկախութենէն ետք, մեր գործունէութիւնը շատ աւելի բազմաբնոյթ եղած է եւ Միութիւնը աւելի քան 150 միլիոն ամերիկեան տոլար ներդրած է հայրենի տարբեր ծրագիրներու մէջ: Խորհրդային կարգերու անկումէն ետք, Հ.Բ.Ը.Մ.ը նիւթական կարելոր ներդրում կատարեց հիմնելու համար Հայաստանի Ամերիկեան Համալսարանը՝ առիթ ստեղծելով որ հայրենի ուսանողներ բացուին արեւմտեան կրթական դրութեան: Կազմակերպութիւնը կրթաթոշակներ կը տրամադրէ Հայաստանի ֆրանսական համալսարանին, նաեւ յատկացումներ կը կատարէ Երեւանի Պետական Համալսարանին: Միութիւնը տնտեսապէս կ'ապահովէ Հայաստանի Ֆիլիարմոնիք Նուագախումբը,

ինչպես նաև արուեստի եւ երաժշտութեան շարք մը նախաձեռնութիւններ, պահպանելու համար անցեալ վարչակարգի մշակութային ասանդը, նկատի ունենալով որ հայրենի պետութիւնը ցարդ իր կազմաւորումի հանգրուանին տնտեսապէս ի վիճակի չէր ապահովելու այդ:

Ս. Էջմիածնի հետ գործակցութեամբ, Հ.Բ.Ը.Մ.ը ստանձնեց նախկին խորհրդային շրջանի «պիոներական պալատ»ներէն մի քանին եւ զանոնք վերածեց պատանեկան կեդրոններու, ուր դպրոցէն ետք մասնագէտ ուսուցիչներ նկարչութիւն, ձեռարուեստ, պար եւ երաժշտութիւն կը դասաւանդէն մօտ 4000 պատանիներու՝ զանոնք զբաղ պահելով:

Պատանեկան այս կեդրոնները կը յայտնաբերեն եւ կը մշակեն պատանի տաղանդներ, երբեմն նոյնիսկ հանձարեղ արուեստագէտներ, որոնց կատարողութիւնը եւ ներկայացուցած յայտագիրները զգլխիչ տպաւորութիւն կը թողուն հանդիսատեսին վրայ՝ հասկնալի դարձնելով Միութեան հաւատարմութիւն եւ ուսուցիչներուն նուիրումը այս նախաձեռնութեան:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիի բարեկարգումի աշխատանքներուն ի նպաստ Միութեանականներու կատարած ներդրումներով կը կառուցուին նոր եկեղեցիներ եւ կը կազմակերպուին համայնքներ 80 տարիներու խորհրդային վարչակարգէ ետք: Նոյն ներդրումները կարելի դարձուցին Սեւանայ Լիճին մօտ Ժառանգաւորաց նոր կեդրոնի կառուցումը: Միութիւնը կ'օժանդակէ Վեհափառի եկեղեցաշինութեան աշխատանքներուն՝ կրթաթոշակներ տրամադրելով հոգեւորական ծառայութեան պատրաստուող ուսանողներու արտասահմանեան մասնագիտական ուսման համար: Մենք համոզուած ենք որ Եկեղեցին պիտի շարունակէ կարեւոր դեր կատարել սփիւռքի մէջ մեր դիմագիծի պահպանումին ուղղութեամբ:

Հ.Բ.Ը.Միութիւնը Հայաստանի մէջ հաստատած է սկաուտական ճամբար մը եւ կը կազմակերպէ պատանեկան հետախուզական շրջապտոյտներ, որոնց կը մասնակցին տարեկան աւելի քան 500 սփիւռքահայ պատանի-պատանուհիներ: Միութիւնը իրագործեց նաև հայկական համացանցային Գոլէճը որ հայերէն լեզուի, պատմութեան եւ մշակոյթի դասընթացքներ կը տրամադրէ սփիւռքահայերու, հեռակայ դրութեամբ: Մեր նախաձեռնութիւնները կ'ընդարձակենք Հայաստանի մէջ որովհետեւ համոզուած ենք որ դժուար պիտի ըլլայ մեր ինքնութիւնը պահել սփիւռքի մէջ, առանց հայրենիքին եւ եկեղեցիին ներշնչած ոգիին: Միաժամանակ գործունէութիւն կը ծաւալենք Պուլկարիոյ, Ռումանիոյ եւ Արեւելեան Եւրոպայի այլ երկիրներու մէջ: Ծրագիրներ սկսած ենք նաև Ռուսիոյ մէջ, ուր աւելի քան երկու միլիոն հայեր կ'ապրին: Մեր համայնքներու բազմացող կարիքներուն դիմաց անհրաժեշտ է որ աւելցնենք մեր միջոցները, որոնք այլապէս սահմանափակ պիտի ըլլան: